ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/1

Ք. Երևան «15» հունվարի 2020թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ս. Մաչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Յուքոմ ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 101040000 (հարյուր մեկ միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան Կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝ 01506515	Յուքոմ ՓԲԸ ք. Երևան, Տերյան 19, բն. 4 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570043102134100 ՀՎՀՀ 00024873 Հայկ Եսայան
Գլխավոր քարտուղարի Պարտականությունները կատարող Ս. Մաչյան _____ /ստորագրություն/ Կ.Տ	---------- (ստորագրություն) Կ.Տ.

.

Հավելված N 1
«15» հունվարի 2020 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/1ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	64211130/501 Բջջային հեռախոսակապի ծառայություններ	Ներկայացվում է ստորև	դրամ	101040000	1	ՀՀ ամբողջ տարածքում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա համար կնքված համաձայնագրի հիման վրա մինչև 30.12.2022թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Ձեռքբերվող ծառայության նկարագիր

Կատարողը պարտավոր է.

1. Պատվիրատուի կարիքների համար վերջինիս էլեկտրոնային հայտի հիման վրա տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխարհագրորեն ամրակցված համարագրման պլանից հատկացված մինչև 600* բջջային հեռախոսահամարներ՝ Պատվիրատուի կողմից սահմանված սահմանաչափով բջջային հեռախոսահամարներ /բոլոր հեռախոսահամարներն ամբողջությամբ ներառվում են փակ խմբում/՝ որոնք հնարավորություն կտան Պատվիրատուին ամրակցված վայրում/վայրերում ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով իրական ժամանակում կատարելու և ստանալու ներհանրապետական և/կամ միջազգային զանգեր, GSM 900/1800 ստանդարտի.
2. Յուրաքանչյուր հեռախոսահամարի հետ միաժամանակ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածի ընթացքում օգտագործման իրավունքով տրամադրել պլանշետ, որի նվազագույն տեխնիկական ցուցանիշներն են՝
   Առնվազն 4 հիմնական պրոցեսոր՝ 1280 ՄՀց-ից ոչ պակաս
   Առնվազն 2 գիգաբայթ RAM- ը
   Առնվազն 16 գիգաբայթ ներքին հիշողության, առնվազն 64 գիգաբայթ հիշողության քարտի հնարավորություն
   Առնվազն 10.1 դյույմանոց էկրան
   Բարձր էկրանին բանաձեւը՝ առնվազն 800-ից 1280 պիքսել
   Առնվազն 2 տեսախցիկներ
   SIM-քարտ օգտագործելու հնարավորություն, Bluetooth, Wi-Fi եւ այլ գործիքներ:
3. ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի էլեկտրոնային հայտի հիման վրա, մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել նոր հեռախոսահամարներ՝ համապատասխան սահմանաչափով /չգերազանցելով 600 հեռախոսահամարի քանակը/.
4. Պատվիրատուի էլեկտրոնային հայտի հիման վրա մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել հեռախոսահամարների սահմանաչափերի փոփոխություն.
5. Պատվիրատուի պահանջով մեկ աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսահամարների ընթացիկ հաշվեկշիռների վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն.
6. Կատարողականը ներկայացնելիս տրամադրել յուրաքանչյուր հեռախոսահամարի հաշվետու ամսվա ընթացքում սպառած րոպեների քանակը՝ ըստ համապատասխան սակագների:

Բջջային հեռախոսակապի ծառայություններին ներկայացվող ընդհանուր պահանջներ

7. Բաժանորդների փակ խմբում սակագներով անվճար հեռախոսազանգերի ծառայության տրամադրում սոցիալական ոլորտում գործող բոլոր կառույցների բջջային հեռախոսահամարների միջև:
8. Հարկային հաշիվների ներկայացումը, ոչ ուշ քան ընթացիկ ամսվա մինչև 10-ը:
9. Պատվիրատուի դիմելու դեպքում ապահովել հեռախոսահամարների մասին տեղեկությունների ստացումը ծառայություններ մատուցողի կայքի միջոցով:

10. Ծառայության մատուցումը և սպասարկումը պետք է իրականացվի համապատասխան «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի:
11. Ծառայություն մատուցողը պետք է պաշտպանի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ խոսակցության փաստը, զանգողի և զանգը ստացողի ինքնությունը և նրանց գտնվելու վայրերը) և հեռախոսացանցով անցնող այլ հաղորդումների պարունակությունը և չպետք է գրանցի կամ պահպանի այդ տվյալները, բացառությամբ դատարանի համապատասխան որոշման կամ օրենքով նախատեսված դեպքերի:
12. Բաժանորդների շուրջօրյա սպասարկում շաբաթվա բոլոր օրերին:
13. Անհատական կորպորատիվ մասնագետի կողմից սպասարկում:
14. Ծախսերի վերահսկման ծառայություն համապատասխան սահմանչափերի վերաբաշխմամբ մեկ պայմանագրի ներքո
15. Համարների սահմանաչափերի կարգավորում, համապատասխան սահմանաչափին հասնելու դեպքում հետվճարային ծառայությունների կասեցում, անհատական ենթահաշվով կանխավճարային սկզբունքով ծառայությունների օգտագործում:
16. Միջազգային հեռախոսազանգերի տրամադրում բջջային հեռախոսակապի միջոցով:
17. Ռոմինգ ծառայության անվճար ակտիվացում:
18. Ռոմինգի հատուկ սակագներ եվրոպական երկրների համար:
19. Փաթեթում ներառված հեռախոսահամարների չսպառված սահմանաչափի /լիմիտ/ մասով միմյանց փոխանցման հնարավորություն:
20. Բջջային ինտերնետ կապի տրամադրում:

*Յուրաքանչյուր հեռախոսահամար պետք ունենա ամսեկան 7 ԳԲ չափով ինտերնետ հասանելիության հնարավորություն, 600 րոպե ելքային զանգերի հնարավորություն դեպի ՀՀ և ԼՂՀ բոլոր օպերատորների ցանցեր, ինչպես նաև ամսեկան 1500 ՀՀ դրամի չափով սահմանաչափ /լիմիտ/:

ՑԱՆԿ

Մատուցվելիք ծառայությունների

Հաշվարկային համակարգ	Հետվճարային		
	առանց ԱԱՀ	ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
Ամսական բաժանորդային վարձ՝ յուրաքանչյուր համարի համար, "փակ խմբում"* անսահմանափակ զանգեր կատարելու համար	2416.7	483.3	2900
	Գումարը հաշվարկվում է ըստ վայրկյանների, սկսած 1-ին վայրկյանից		
Տեղական կապի ծառայություններ	Րոպեի սակագին առանց ԱԱՀ	ԱԱՀ	Րոպեի սակագին ներառյալ ԱԱՀ
Ելքային Զանգեր			
Տվյալ բջջային ցանց «Փակ խմբից» դուրս զանգեր կատարելու համար	0	0	0
դեպի ՀՀ ամրակցված ցանց, ՀՀ այլ բջջային ցանցեր, ԼՂՀ բջջային և ամրակցված ցանցեր, դեպի ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանց	10	2	12
Կարճ հաղորդագրության ուղարկում Ելքային մեկ հաղորդագրության սակագինը՝ «փակ խմբի» բաժանորդների միջև Տվյալ բջջային ցանցի ներսում ՀՀ և ԼՂՀ այլ բջջային ցանցեր	12.5	2.5	15
Ելքային մեկ հաղորդագրության սակագինը դեպի միջազգային բջջային ցանցեր	16.67	3.33	20
«Բջջային GPRS – Ինտերնետ», «GPRS – WAP», «Ինտերնետ բոլորի համար» 1 ՄԲ փոխանցված/ստացված տվյալների սակագին	2.5	0.5	3

Ռոմինգի հատուկ սակագներ եվրոպական երկրների համար

Ակտիվացման վճար	0
մուտքային զանգի 1-ին րոպեն	150
մուտքային զանգի 2-ից 10-րդ րոպեները	150
մուտքային զանգի 11-րդ րոպեից	150
Այլ ուղղություններ	250

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515

Գլխավոր քարտուղարի
Պարտականությունները կատարող
Ս. Մաչյան _____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Յուքոմ ՓԲԸ
ք. Երևան, Տերյան 19, բն. 4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
Հայկ Եսայան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«15» հունվարի 2020 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/1ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64211130/501	Բջջային հեռախոսակապի ծառայություններ	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	101040000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515

Գլխավոր քարտուղարի
Պարտականությունները կատարող
Ս. Մաչյան _____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Յուքոմ ՓԲԸ
ք. Երևան, Տերյան 19, բն. 4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
Հայկ Եսայան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
«ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ»

«15» ՀՈՒՆՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ

N *«ԱՍՀՆ- ԳՀԾՁԲ-20/1»*

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **«03» փետրվարի 2021թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով «15» հունվարի 2020թ. N *«ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/1»* պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման համար ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 4.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պայմանագրի գինը 2021 թվականի համար կազմում է 33 680 000 (Երեսուներեք միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ծառայության մատուցման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:»:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածը կազմված են 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Յուքոմ» ՓԲԸ
հասցեն՝ ք. Երևան, կառավարական տուն 3	ք. Երևան, Գ. Լուսավորիչ 9
Բանկի անվանումը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 900011030773	հ/հ՝ 1570043102134100
հվհհ՝ 01506515	հվհհ՝ 00024873
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
..... Ս. Մուրադյան	..... Ա. Խաչատրյան
Կ.Տ. (ստորագրություն)	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված
2021թ. «03» «վեցերորդ» կնքված
N 1 համաձայնագրի
Հավելված N 2
«15» հունվարի 2020թ. կնքված
N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64211130/501	Բջջային հեռախոսակապի ծառայություններ		8083200	8083200	16503200	16503200	16503200	24923200	24923200	24923200	33680000	33680000	33680000	33680000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
հասցեն՝ ք. Երևան, կառավարական տուն 3
Բանկի անվանումը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011030773
հվհհ՝ 01506515
Գլխավոր քարտուղար

..... Ս. Մուրադյան
Կ.Տ. (ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Յուքոմ» ՓԲԸ
ք. Երևան, Գ. Լուսավորիչ 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ՝ 1570043102134100
հվհհ՝ 00024873
Տնօրեն՝

---------- Ա. Խաչատրյան
Կ.Տ. (ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
«ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ» 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/1 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 09.08.2021

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս Միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Արշակյանի, ով գործում է Նախարարության գլխավոր քարտուղարի կողմից 2021 թվականի հուլիսի 26-ին տրված լիազորագրի հիման վրա, մի կողմից,

Միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն կամ Պատվիրատու), ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Արշակյանի, ով գործում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի N 37-Լ հրամանով հաստատված կանոնադրության հիման վրա, երկրորդ կողմից և

«Յուքոմ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Արա Խաչատրյանի, երրորդ կողմից (երեք կողմը միասին՝ Կողմեր),

ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքի (խմբագրված 03.02.2021թ. ՀՕ-70-Ն օրենքով), ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 251-Ն որոշման դրույթներով,

նկատի ունենալով **Նախարարության և «Յուքոմ» ՓԲ ընկերության միջև 2020 թվականի հունվարի 15-ին կնքված ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման պետական գնման թիվ ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/1 պայմանագրում** (այսուհետ՝ Պայմանագիր) պատվիրատու կողմի փոփոխություն կատարելու և որպես պատվիրատու Ծառայության կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունները ստանձնելու անհրաժեշտությունը,

կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Սույն համաձայնագրով Կողմերը փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրում կատարում են կողմի՝ պատվիրատուի փոփոխություն և որպես Պայմանագրով պատվիրատու կողմ սահմանում են **Միասնական սոցիալական ծառայությանը (ՀՎՀՀ՝ 02505511, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 13, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն՝ հաշվեհամար՝ 900011030773)**: Պայմանագրի կողմի փոփոխմամբ պայմանագրում փոփոխված են համարվում

նաև պատվիրատուի վավերապայմանները՝ հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, բանկային վավերապայմանները, որոնք նշված են սույն համաձայնագրում:

2. Սույն համաձայնագրի կնքմամբ Պայմանագրի պատվիրատու կողմը համարվում է փոփոխված: Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները, պայմանները, պայմանագրի առարկան, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայության հանձնման և ընդունման կարգը, պայմանագրի գինը, Կողմերի պատասխանատվությունը, անհաղթահարելի ուժի ազդեցությունը, այլ պայմաններ սահմանող դրույթները, թիվ 1 հավելվածը կարագավորող հարաբերությունները թողնվում են անփոփոխ և շարունակում են գործել նույն կարգով:

3. Սույն համաձայնագրի հիման վրա Պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, պատվիրատուի համար նախատեսված բոլոր իրավունքները և պարտավորությունները սույն համաձայնագրի ստորագրման օրվանից ամբողջ ծավալով անցնում են Ծառայությանը:

4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է Պայմանագրի գործողության ամբողջ ժամկետում: Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

5. Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երեք օրինակից (յուրաքանչյուր օրինակը 2 (երկու) էջից), որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՓՈՓՈԽՎՈՂ ԿՈՂՄ	ԿԱՏԱՐՈՂ
Միասնական սոցիալական ծառայություն	**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**	**«Յուքոմ» ՓԲԸ**
ՀՎՀՀ՝ 02505511	ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 00024873
Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 13	Հասցե՝ Կառավարական տուն 3	ք. Երևան, Դավիթ Անհաղթ 8/4
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն		«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011030773		Հ/Հ 1570043102134100
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Ա.Արշակյան	Լիազորված անձ՝ Ա.Արշակյան	Տնօրեն՝ Ա. Խաչատրյան
ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.		Կ.Տ.